

Ոչ պաշտոնական թարգմանություն

ՄԱԿ ՓԳՀ-ի դիտարկումները Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի և քրեական դատավարության օրենսգրքի նախագծերի վերաբերյալ

Ներածություն

Միավորված ազգերի կազմակերպության փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (ՄԱԿ ՓԳՀ) ներկայացուցչությունը Հայաստանի Հանրապետությունում իր խորին շնորհակալությունն է հայտնում *Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի և քրեական դատավարության օրենսգրքի նախագծերի* վերաբերյալ հանրային քննարկումներին մասնակցելու հնարավորության համար, որոնք կազմակերպվել էին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության և Եվրոպայի խորհրդի կողմից և տեղի ունեցան 2019 թվականի դեկտեմբերին: ՄԱԿ ՓԳՀ-ն բարձր է գնահատում իր դիտարկումներն ու փորձը ներկայացնելու այս հնարավորությունը: Այս առումով ՄԱԿ ՓԳՀ-ն պատրաստ է հետազայում ևս քննարկումներ ունենալ փախստականների պաշտպանության երաշխիքների ամրապնդման վերաբերյալ և շարունակել սերտ համագործակցությունը բոլոր համապատասխան մարմինների, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ազգային ժողովի (Խորհրդարան) հետ Հայաստանում փախստականների պաշտպանության ամրապնդման ուղղությամբ:

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է այս դիտարկումները որպես Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից փախստականներին և իր մանդատի ներքո գտնվող այլ անձանց միջազգային պաշտպանություն տրամադրելու և փախստականների խնդրի հարատև լուծումներ գտնելու հարցում կառավարություններին աջակցելու լիազորությամբ օժտված գործակալություն: Ինչպես սահմանված է իր Կանոնադրության մեջ, ՄԱԿ ՓԳՀ-ն ապահովում է իր գրասենյակի իրավասության ներքո գտնվող փախստականների պաշտպանությունը, այդ թվում, «*փախստականների պաշտպանությանն առնչվող միջազգային կոնվենցիաների կնքմանը եւ վավերացմանը նպաստելով, դրանց իրականացումը վերահսկելով և դրանցում փոփոխություններ կատարելու առաջարկներ ներկայացնելով*»¹: ՄԱԿ ՓԳՀ-ի՝ իր Կանոնադրությամբ սահմանված

¹ Տես Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի Կանոնադրության 8-րդ մասի (ա) կետը, որը վերանայվել է Գլխավոր ասամբլեայի կողմից 58/153 բանաձևով, 24 փետրվարի 2004թ.: Այն հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://bit.ly/2p47kBm>:

վերահսկողական լիազորությունը վերահաստատված է Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի (այսուհետ՝ 1951թ. Կոնվենցիա) 35-րդ հոդվածում, համաձայն որի՝ պայմանավորվող պետությունները պարտավորվում են «*համազործակցել Միավորված ազգերի կազմակերպության փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի [...] հետ համապատասխան գործառույթների իրականացման գործում, և, մասնավորապես, հեշտացնում են սույն Կոնվենցիայի դրույթների կիրառումը վերահսկելու նրա պարտականությունը*»²: Նմանատիպ դրույթ ներառված է Փախստականների կարգավիճակի մասին 1967 թվականի արձանագրության II հոդվածում³:

Այսպիսով՝ ՄԱԿ ՓԳՀ-ի դիտարկումները և այս օրենսդրական գործընթացի համատեքստում հետագա խորհրդակցությունների համար հասանելիությունը հիմնված են այս միջազգային փաստաթղթերի վրա: Ավելին, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն) 81-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները պահանջում են հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի առնել Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան: Ինչպես ներկայացվել է վերը, ՄԱԿ ՓԳՀ-ն ունի Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասում նշված իրավական կարգավիճակին շատ նման կարգավիճակ և, որպես այդպիսին, ակնկալում է արժանանալ համանման մոտեցման⁴:

Ընդհանուր դիտարկումներ

ՄԱԿ ՓԳՀ-ն բարձր է գնահատում համապատասխան պետական գործակալությունների, Հայաստանի Հանրապետության Կառավարության և Խորհրդարանի՝ ազգային օրենսդրության, այդ թվում՝ փախստականների պաշտպանությանն առնչվող իրավական դրույթների ամրապնդմանն ուղղված շարունակական և համակարգային ջանքերը: Չնայած քրեական օրենսգիրքն ու քրեական դատավարության օրենսգիրքը ՄԱԿ ՓԳՀ-ի հիմնական ուշադրության առարկան չեն, վերջին տասնամյակի ընթացքում գրանցվել են մի շարք դեպքեր, երբ

² ՄԱԿ Գլխավոր ասամբլեա, *Փախստականների կարգավիճակի մասին 1951թ. կոնվենցիա*, 28 հուլիսի 1951թ., Միավորված ազգերի կազմակերպություն, Միջազգային պայմանագրերի շարք, հատոր 189, էջ 137, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.refworld.org/docid/3be01b964.html>:

³ ՄԱԿ Գլխավոր ասամբլեա, *Փախստականների կարգավիճակի մասին արձանագրություն*, 31 հունվարի 1967թ., Միավորված ազգերի կազմակերպություն, Միջազգային պայմանագրերի շարք, հատոր 606, էջ 267, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.refworld.org/docid/3ae6b3ae4.html>:

⁴ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Հոդված 81. Հիմնական իրավունքներն ու ազատությունները և միջազգային իրավական պրակտիկան.

«1. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան»: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.president.am/en/constitution-2015/>:

ապաստան հայցողներ և փախստականներ են ձերբակալվել սահմանին անկանոն մուտքի համար, կամ նրանց ծագման/մշտական բնակության երկիրը նրանց հանձնման մասին միջնորդություն է ներկայացրել: Արձանագրվել են նաև դեպքեր, երբ ապաստան հայցողների և փախստականների նկատմամբ քրեական հետապնդում է իրականացվել այլ հանցագործությունների համար: ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից ներկայացվող առաջարկությունները մասնավորապես կենտրոնանում են քրեական դատավարության և արտաքսման ընթացակարգերի կարևոր երաշխիքների վրա: Այդ առաջարկությունները բխում են ներպետական օրենսդրության համապատասխան դրույթների գործնական կիրառությունը մշտադիտարկելու ՄԱԿ ՓԳՀ-ի փորձից: ՄԱԿ ՓԳՀ-ն ակնակալում է, որ առաջարկվող օրենսդրական փոփոխությունները արդյունավետորեն կլուծեն չպատժելիության սկզբունքի մեկնաբանությանն առնչվող խնդիրները, կկատարելագործեն գործող պրակտիկան⁵ և ի վերջո կբարելավեն պաշտպանության միջավայրը Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողների և փախստականների համար:

ՄԱԿ ՓԳՀ-ն սույն դիտարկումները ներկայացնում է Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (e-draft.am) 19.11.2019թ.-ին (Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի նախագիծ) և 08.11.2019թ.-ին (Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի նախագիծ) հրապարակված տարբերակների հիման վրա:

Կոնկրետ դիտարկումներ

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի նախագիծը

1.1 Հոդված 13. Հանցանք կատարած անձին արտահանվելը կամ փոխանցելը

ՄԱԿ ՓԳՀ-ն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի նախագծի (քրեական օրենսգրքի նախագիծ) 13-րդ հոդվածի 4-րդ մասը միջազգային պաշտպանության կարիք ունեցող անձանց համար նախատեսում է հանձնման դեմ երաշխիքներ: Այն սահմանում է.

⁵ Տես ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտե, *Սևփոփիչ դիտարկումներ Հայաստանի չորրորդ պարբերական զեկույցի վերաբերյալ, 26 հունվարի 2017թ.*, CAT/C/ARM/CO/4, 27 հունվարի 2017թ., պարբ. 41: «Նշելով հանդերձ այն փոփոխությունները, որոնք ապօրինի սահմանահատման համար պատասխանատվությունից ազատելու մասին դրույթը (Քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 3-րդ մաս) տարածում են ապաստան հայցող բոլոր անձանց և ոչ միայն նրանց վրա, ովքեր դիտարկվում են «քաղաքական ապաստանի» համար, Կոմիտեին մտահոգում են հաղորդումներն այն մասին, որ այս դրույթը ոչ միշտ է պահպանվում գործնականում, և որ որոշ ապաստան հայցողներ դեռ կալանավորվում են ապօրինի սահմանահատման համար»: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://bit.ly/36w482l>: Տես նաև ԱՄՆ Պետդեպարտամենտ, 2017թ. Երկրների զեկույցներ մարդու իրավունքների ոլորտում գործելակերպերի մասին – Հայաստան, 20 ապրիլի 2018թ., որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://bit.ly/36JYedX>:

«4. Հայաստանի Հանրապետությունում գտնվող ենթադրյալ հանցանք կատարած կամ դատապարտված անձն այլ պետությանը չի արտահանվում, եթե հիմնավոր պատճառներ կան ենթադրելու, որ հանձնումը պահանջվել է նրանց ռասայական, կրոնական, ազգային, որոշակի սոցիալական խմբի պատկանելության կամ քաղաքական կարծիքի պատճառով հետաքննության կամ պատժի կիրառման համար»:

ՄԱԿ ՓԳՀ-ն մտահոգ է, որ այս դրույթը չի ներառում պաշտպանության կարիք ունեցող անձանց որոշ այլ խմբերի, որոնք են՝ (i) ապաստան հայցողներ, (ii) անձինք, ովքեր բացի հանցագործության համար քրեական հետապնդման կամ պատժի ենթարկվելու վախից, կարող են նաև ունենալ «*հետապնդումների ենթարկվելու հիմնավոր երկյուղ*»⁶, և (iii) անձինք, ում վրա տարածվում է «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի («Փախստականների և ապաստանի մասին» օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ փախստականի ընդլայնված սահմանումը⁷: Անձանց այս բոլոր խմբերը, որոնք դուրս են մնում *քրեական օրենսգրքի նախագծի* 13-րդ հոդվածի 4-րդ մասի շրջանակից, պաշտպանված են վերադարձից «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 9-րդ հոդվածի ուժով: Ուստի, չվերադարձելիության սկզբունքի խախտումների դեմ պատշաճ երաշխիք պետք է ապահովվի «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 9-րդ հոդվածին հղում կատարելու միջոցով՝ թյուրըմբռնումից խուսափելու և պրակտիկայի միասնականությունը ապահովելու նպատակով⁸:

Ավելին, ՄԱԿ ՓԳՀ-ն նաև արձանագրում է, որ հանձմանն առնչվող դրույթները հանվել են *Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի նախագծից*: ՄԱԿ ՓԳՀ-ն նաև տեղյակ է, որ արդարադատության նախարարությունը մշակել է «Քրեական գործերով իրավական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ, և որ այդ օրենքի նախագծի 3-րդ գլխի նպատակն է համապարփակ կերպով սահմանել հանձմանն առնչվող կանոններ, պահանջներ և ընթացակարգեր: Այս կապակցությամբ ՄԱԿ ՓԳՀ-ն գտնում է, որ *քրեական օրենսգրքի նախագծի* 13-րդ հոդվածը ավելորդ է, և պետք է դիտարկել այն հանելու նպատակահարմարությունը, որպեսզի հնարավոր լինի

⁶ ՄԱԿ փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), *Ձեռնարկ փախստականի կարգավիճակի որոշման ընթացակարգերի և չափանիշների մասին և Ուղեցույց Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայով և դրա Փախստականների կարգավիճակին առնչվող 1967 թվականի արձանագրությամբ սահմանված միջազգային պաշտպանության վերաբերյալ*, 2019թ. ապրիլ, HCR/1P/4/ENG/REV. 4, պարբ. 58, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.refworld.org/docid/5cb474b27.html>:

⁷ *Հայաստան, Փախստականների և ապաստանի մասին 2008 թվականի թիվ ՀՕ-211-Ն օրենք (2015թ.)* [Հայաստան], 27 նոյեմբերի 2008թ., հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.refworld.org/docid/4f1986412.html>:

⁸ Հանձման և ապաստանի փոխադրեցության վերաբերյալ մանրակրկիտ ուղղորդում կարելի է գտնել ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (ՄԱԿ ՓԳՀ) *Հանձման և փախստականների միջազգային պաշտպանության վերաբերյալ ուղղորդող ծանոթագրության* մեջ, 2008թ. ապրիլ, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.refworld.org/docid/481ec7d92.html>:

խուսափել շփոթմունքից և ապահովել համապատասխան դրույթների և պաշտպանության երաշխիքների սահուն գործնական կիրառությունը:

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է քրեական օրենսգրքի նախագծից հանել 13-րդ հոդվածը կամ ուղղակի հղում կատարել «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 9-րդ հոդվածին, որով սահմանվում են պաշտպանված անձանց տարբեր խմբերը:

1.2 Հոդված 64. Օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելը

Այս դրույթը ներմուծում է «վտարելը» որպես քրեական պատժի նոր տեսակ օտարերկրացիների դեպքում: Այս հոդվածի համաձայն՝ վտարումը կիրառվելու է որպես հիմնական քրեական պատժ թեթև և միջին ծանրության հանցագործությունների համար և լրացուցիչ պատժ՝ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների համար: Չնայած օտարերկրացիների վտարումը Հայաստանի ինքնիշխան իրավունքն է, մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերը երաշխիքներ են պարունակում անհատների որոշակի խմբերի համար:

ՄԱԿ ՓԳՀ-ն ողջունում է այն հանգամանքը, որ 64-րդ հոդվածի 3-րդ մասը թույլ չի տալիս վտարել ապաստան հայցողներին, փախստականներին և այլ անձանց, ովքեր պետք է պաշտպանված լինեն վերադարձից.

«3. Հայաստանի Հանրապետության տարածքից չեն կարող վտարվել՝

1) մինչև հանցանք կատարելը փախստականի կարգավիճակ կամ Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած անձը,

2) պատժ նշանակելու պահին ապաստան հայցող անձը,

3) միջազգային պայմանագրերի համաձայն՝ չվերադարձելիության սկզբունքից օգտվող օտարերկրյա քաղաքացին,

4) մինչև հանցանք կատարելը Հայաստանի Հանրապետության քաղաքացու կամ Հայաստանի Հանրապետությունում հատուկ կացության կարգավիճակ ունեցող կամ Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող անձի հետ ամուսնացած կամ խնամքին Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխա ունեցող անձը»:

Այնուամենայնիվ, ՄԱԿ ՓԳՀ-ին մտահոգում է այն, որ 64-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետում նշվում են միայն այն փախստականները, որոնք պաշտպանություն են ստացել «*մինչև հանցագործություն կատարելը*»: Եթե անձը բավարարում է փախստականի սահմանման չափորոշիչները, նրան պետք է ճանաչել և վերաբերվել որպես փախստականի՝ անկախ ճանաչման ժամանակից:

Ինչ վերաբերում է ապաստան հայցողներին առնչվող դրույթին (64-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ), «պատիժ նշանակելու պահ»-ը նշելը կարող է հանգեցնել մեկնաբանության, ըստ որի՝ այս երաշխիքը չի կիրառվում պատիժ նշանակելուց հետո ներկայացված ապաստանի դիմումի դեպքում: Ուստի կարևոր է ընդգծել, որ ապաստան հայցելը համընդհանուր մարդու իրավունք է⁹: Յուրաքանչյուր ապաստանի դիմում պետք է դիտարկվի առանձին՝ արդար, գործուն և արդյունավետ ապաստանի ընթացակարգի շրջանակում: Այս առումով այն հանգամանքը, թե երբ է ներկայացվում ապաստանի դիմումը, այն է՝ պատիժ նշանակելուց առաջ, հետո, թե այդ ընթացքում, չպետք է համարվի վտարման ընթացակարգի միջով անցնող ապաստան հայցողների պաշտպանությունը պայմանավորող և/կամ նման անձանց համար ապաստանի հասանելիությունը և նրանց ապաստանի հայցի ըստ էության դիտարկումը խոչընդոտող գործոն:

Հետևաբար ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է դիտարկել «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 9-րդ հոդվածը¹⁰, որը ուղղակիորեն և համապարփակ

⁹ Ապաստան հայցելու և ապաստանից օգտվելու իրավունքը ամրագրված է տարբեր տարածաշրջանային իրավական փաստաթղթերում և մասամբ իրականացվում է պետությունների՝ փախստականներին 1951 թվականի Կոնվենցիայի և դրա 1967 թվականի Արձանագրության, ինչպես նաև փախստականներին առնչվող տարածաշրջանային իրավական փաստաթղթերի համաձայն միջազգային պաշտպանություն տրամադրելու պարտականությունների միջոցով: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 14-րդ հոդվածը սահմանում է, որ «յուրաքանչյուր ոք ունի հետապնդումից պաշտպանվելու նպատակով այլ երկրներում ապաստան հայցելու և ապաստանից օգտվելու իրավունք»: Ամերիկյան պետությունների կազմակերպություն, Մարդու իրավունքների և պարտականությունների ամերիկյան հռչակագիր, 2 մայիսի 1948թ., Հոդված XXVII, www.unhcr.org/refworld/docid/3ae6b3710.html, որը վկայակոչում է ապաստան հայցելու և ստանալու իրավունքը: Ամերիկյան պետությունների կազմակերպություն, Ամերիկյան կոնվենցիա մարդու իրավունքների մասին, «Սան Խոսեի դաշնագիր», Կոստա Ռիկա, 22 նոյեմբերի 1969թ., Հոդված 22(7), www.unhcr.org/refworld/docid/3ae6b36510.html, որը վկայակոչում է ապաստան հայցելու և ստանալու իրավունքը: Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան խարտիա («Բանջուլի խարտիա»), 27 հունիսի 1981թ., CAB/LEG/67/3 rev. 5, 21 Մ.Ի.Ն. 58 (1982), Հոդված 12(3), www.refworld.org/docid/3ae6b3630.html, որը վկայակոչում է ապաստան հայցելու և ստանալու իրավունքը: Եվրոպական միություն, Հիմնարար իրավունքների մասին Եվրոպական միության խարտիա, 26 հոկտեմբերի 2012թ., 2012/C 326/02, Հոդված 18, www.refworld.org/docid/3ae6b3b70.html (ԵՄ խարտիա հիմնարար իրավունքների մասին), որտեղ նշվում է, որ ապաստանի իրավունքը պետք է երաշխավորված լինի՝ պատշաճ կերպով հաշվի առնելով Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիան և ԵՄ իրավունքը:

¹⁰ Փախստականների և ապաստանի մասին Հայաստանի Հանրապետության 2008թ. թիվ ՀՕ-211-Ն օրենք (2015թ.) [Հայաստան], 27 նոյեմբերի 2008թ., որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.refworld.org/docid/4f1986412.html>:

Հոդված 9. Չվերադարձելիություն

1. Չվերադարձելիության սկզբունքը, սույն օրենքի և միջազգային իրավունքի համաձայն, փախստականին որևէ կերպ չվերադարձնելն է այն տարածքների սահմանները, որտեղ նրա կյանքին կամ ազատությանը կարող է վտանգ սպառնալ ռասայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պատկանելության, քաղաքական հայացքների կամ համատարած բռնության, արտաքին հարձակման, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ հասարակական կարգը խախտող այլ լուրջ իրադարձությունների հիմքով:

Չվերադարձելիության սկզբունքը չի կիրառվում այն փախստականի նկատմամբ, որը հիմնավոր պատճառներով վտանգավոր է համարվում Հայաստանի Հանրապետության անվտանգության համար, կամ որը, օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված լինելով առանձնապես ծանր հանցագործության համար, վտանգ է ներկայացնում հասարակության համար:

կերպով սահմանում է չվերադարձելիության սկզբունքը և միջազգային չափորոշիչներին համապատասխան դրանից հնարավոր բացառությունները: Ուստի կարևոր կլինի, որ *քրեական օրենսգրքի նախագծի* 64-րդ հոդվածի 3-րդ մասում ուղղակի հղում կատարվի «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 9-րդ հոդվածին, քանի որ նման հղման բացակայությունը կարող է հանգեցնել թյուրըմբռումների և մի պրակտիկայի, որը կարող է հակասել չվերադարձելիության սկզբունքին՝ ամրագրված «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասում (որոնք իրենց հերթին արտացոլում են Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածը), ինչպես նաև մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային նորմերին, մասնավորապես՝ Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի 3-րդ հոդվածում և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածում ամրագրված դրույթներին:

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է փոփոխել 64-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը հետևյալ կերպ.

«Հայաստանի Հանրապետության տարածքից չեն վտարվում՝

- 1) ապաստան հայցողները, փախստականները և այլ անձինք, որոնց վրա տարածվում են «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի դրույթները»:*

1.3 Հոդված 432. Փաստաթուղթ, դրոշմ, կնիք, ձևաթուղթ կեղծելը կամ կեղծ փաստաթուղթ, դրոշմ, կնիք, ձևաթուղթ իրացնելը կամ օգտագործելը

Քրեական օրենսգրքի նախագծի 443-րդ հոդվածի 5-րդ մասով (տես ներքոնշյալ 1.4 բաժինը) և «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասով¹¹ նախատեսված չպատժելիության դրույթի ներդաշնակեցված կիրառությունը ապահովելու նպատակով ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է *քրեական*

2. Ապաստան հայցող անձը մինչև սույն օրենքի 47-րդ հոդվածի համաձայն իր ներկայացրած՝ ապաստանի հայցի վերաբերյալ վերջնական որոշման կայացումը չի կարող արտաքսվել Հայաստանի Հանրապետության տարածքից:

3. Օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը չի կարող արտաքսվել, վերադարձվել կամ հանձնվել այլ երկիր, որտեղ հիմնավոր պատճառներով վտանգ կա, որ նա կենթարկվի դաժան և անմարդկային կամ ստորացուցիչ վերաբերմունքի կամ պատժի, ներառյալ՝ խոշտանգումների:

¹¹Փախստականների և ապաստանի մասին Հայաստանի Հանրապետության 2008 թվականի թիվ ՀՕ-211-Ն օրենք (2015թ.) [Հայաստան], 27 նոյեմբերի 2008թ., որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.refworld.org/docid/4f1986412.html>:

28-րդ հոդվածի 1-ին մաս. «Ապաստան հայցողները և փախստականները Հայաստանի Հանրապետություն ապօրինի մուտք գործելու կամ գտնվելու համար չեն ենթարկվում քրեական կամ վարչական պատասխանատվության»:

օրենսգրքի նախագծի 432-րդ հոդվածը լրացնել նոր պարբերություն, որը կանդրադառնա ապաստան հայցողների և փախստականների կողմից անբավարար, կեղծ կամ կեղծիքի նշաններ պարունակող փաստաթղթերի օգտագործմամբ անկանոն մուտքի հանգամանքներին¹²:

ՄԱԿ ՓԳՀ-ն դիտարկել է, որ անկանոն սահմանահատման որոշ դեպքերում Հայաստանում գործնականում ապաստան հայցողների և փախստականների նկատմամբ հարուցվել են գործեր և՛ ապօրինի սահմանահատման, և՛ կեղծ փաստաթղթերի գործածության համար: ՄԱԿ ՓԳՀ-ն ցանկանում է ընդգծել, որ Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի 31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պաշտպանության հիմնական նպատակը անկանոն մուտքի կամ անկանոն ներկայության համար պատժի չենթարկելն է, եթե առկա են պատժից ազատվելու մյուս պայմանները¹³: Հետևաբար անկանոն մուտքը պետք է նաև ներառի կեղծ, կեղծիքի նշաններ պարունակող, խարդախ ճանապարհով կամ խաբեության այլ մեթոդներով ձեռք բերված փաստաթղթերի միջոցով ժամանելը կամ մուտքը ապահովելը, պաշտոնական սահմանային անցակետերից դուրս Հայաստան ժամանելը կամ Հայաստանի պետական սահմանը հատելը, ինչպես նաև անօրինական միգրացիայի կազմակերպիչների կամ թրաֆիքինգով զբաղվողների օգնությամբ Հայաստան մուտք գործելը¹⁴:

¹² ՄԱԿ-ի փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց հարցերով ժամանակավոր հանձնաժողով, Ապաքաղաքացիության և հարակից հարցերով ժամանակավոր հանձնաժողով, Փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակը. Գլխավոր քարտուղարի հուշագիր, 3 հունվարի 1950թ., E/AC.32/2, այդ պահի դրությամբ 24-րդ հոդվածի նախագծի 2-րդ պարբերության մեկնաբանություն, www.refworld.org/docid/3ae68c280.html, որը սահմանում է. «Փախստականը, ում մեկնումն իր ծագման երկրից սովորաբար փախուստ է, հազվադեպ է այնպիսի վիճակում լինում, որ կարողանա բավարարել ապաստանի երկիր օրինական մուտք գործելու պահանջները (ազգային անձնագիր և մուտքի արտոնագիր ունենալը): Ապաստանի հասկացության տրամաբանությունից է բխում պատժամիջոցներ չկիրառելը հետապնդումից փախչող փախստականի նկատմամբ, ով սահմանը ապօրինի կերպով հատելուց հետո հնարավորինս շուտ ներկայանում է ապաստանի երկրի իշխանություններին»: Ռ-ն ընդդեմ Ասֆոյի, [2008] UKHL 31, Միացյալ Թագավորություն. Լորդերի պալատ (Դատական հանձնաժողով), 21 մայիսի 2008թ., պարբ. 9, www.refworld.org/cases,GBR_HL,4835401f2.html; Մահամադ Արվահ Աբդին և մեկ ուրիշն ընդդեմ Ներքին գործերի նախարարի և մյուսների, Գործ թիվ 734/2010, Հարավային Աֆրիկա. Գերագույն վերաքննիչ դատարան, 15 փետրվարի 2011թ., պարբ. 22, www.refworld.org/cases,SASCA,50239bb62.html; տես նաև ՄԱԿ ՓԳՀ, *ԵՄ համակարգերում ապացույցի, արժանահավատության գնահատումից այն կողմ. ամբողջական զեկույց*, 2013 թվականի մայիս, էջ 213, www.refworld.org/docid/519b1fb54.html; ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), *ՄԱԿ ՓԳՀ դիտարկումները Փախստականների և ապաստանի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի և Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի նախագծի վերաբերյալ չպատժելիության սկզբունքի հետ կապված*, 12 նոյեմբերի 2019թ., որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.refworld.org/docid/5df895004.html> :

¹³ Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի 31-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Պայմանավորվող պետությունները պատժամիջոցներ չեն կիրառում այն փախստականների ապօրինի մուտքի կամ ներկայության կապակցությամբ, ովքեր ուղղակիորեն գալով այն տարածքից, որտեղ նրանց կյանքը կամ ազատությունը վտանգվում էր 1-ին հոդվածի իմաստով, մուտք են գործում իրենց տարածք կամ գտնվում են այնտեղ առանց թույլատրության, պայմանով, որ նրանք անձամբ, առանց ձգձգման, ներկայանան իշխանություններին և մատնանշեն իրենց ապօրինի մուտքի կամ գտնվելու հիմնավոր պատճառ»:

¹⁴ Ռ-ն ընդդեմ Ասֆոյի, [2008] UKHL 31, Միացյալ Թագավորություն. Լորդերի պալատ (Դատական հանձնաժողով), 21 մայիսի 2008թ., պարբ. 9, www.refworld.org/cases,GBR_HL,4835401f2.html.

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է քրեական օրենսգրքի նախագծի 432-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ դրույթով.

«Սույն հոդվածի գործողությունը չի տարածվում ապաստան հայցողների և փախստականների նկատմամբ, եթե Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու համար նրանք ստիպված են եղել օգտագործել կեղծ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձևաթղթեր»:

1.4 Հոդված 443. Պետական սահմանն ապօրինի հատելը

Քրեական օրենսգրքի նախագծի 443-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է.

«Սույն հոդվածի գործողությունը չի տարածվում թրաֆիքինգից տուժած անձի վրա, որը համագործակցում է իրավապահ մարմինների հետ, ինչպես նաև ապաստան հայցողի և փախստականի վրա»:

ՄԱԿ ՓԳՀ-ն գոհունակությամբ նշում է, որ չպատժելիության դրույթի մեկնաբանության և կիրառության առնչությամբ 2016 թվականին իր կողմից արված դիտարկումները հաշվի են առնվել քրեական օրենսգրքի նախագծի մշակման ընթացքում¹⁵: ՄԱԿ ՓԳՀ-ն ողջունում է, որ նոր դրույթը ուղղակիորեն նշում է, որ չպատժելիությունը կիրառվելու է ոչ միայն փախստականների, այլև ապաստան հայցողների նկատմամբ, ինչը այս դրույթը կհամապատասխանեցնի «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 28-րդ հոդվածին:

Մարդու իրավունքների միջամերիկյան դատարան, *Ապաստանի ինստիտուտը և դրա ճանաչումը որպես մարդու իրավունք՝ ըստ Պաշտպանության միջամերիկյան համակարգի (Մարդու իրավունքների մասին ամերիկյան կոնվենցիայի 1-ին հոդվածի 1-ին մասի կապակցությամբ 5-րդ հոդվածի և 22-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ մասերի մեկնաբանությունն ու շրջանակը)*, 2018 թվականի մայիսի 30-ի Խորհրդակցային կարծիք թիվ OC-25/18, Շարք Ա, թիվ 25, պարբ. 99, որը հիշեցնում է, որ ապաստան հայցելու և ստանալու իրավունքը որոշակի պարտականություններ է սահմանում պետությունների համար, այդ թվում՝ անկանոն մուտքի կամ ներկայության համար չպատժելու կամ պատժամիջոց չկիրառելու պարտավորությունը; Դուրմանն ընդդեմ Օբլենդի շրջանային դատարանի մատենավարի, CIV2003-404-4373, Նոր Ջեյկոնիա. Բարձր դատարան, 16 դեկտեմբերի 2003թ., պարբ. 59, www.refworld.org/cases/NZL_HC_40cec1694.html: Ըստ Բարազվանաթ Ջ-ի՝ 31-րդ հոդվածի 1-ին մասը վերաբերում է մուտքի նպատակով «ապօրինի մուտքին կամ կեղծ փաստաթղթերի օգտագործմանը», բայց նաև «փախստականի կարգավիճակ ստանալու նպատակով ապօրինի ներկայությանը կամ կեղծ փաստաթղթերի օգտագործմանը» և «ապօրինի ներկայությանն ու նման ներկայությունը պահպանելու նպատակով կեղծ փաստաթղթերի օգտագործմանը», ինչի համար պահանջվում է գումար սննդի և կացարանի համար, որը կարող է ձեռք բերվել միայն բարեգործության, սոցիալական ապահովության, անազնվության կամ տրնաջան աշխատանքի միջոցով»:

¹⁵ ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), *ՄԱԿ ՓԳՀ դիտարկումները Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի նախագծի վերաբերյալ, որոնք հատուկ անդրադարձնում են ներկա քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 3-րդ մասի ձևակերպմանը*, 2016 թվականի հուլիս, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.refworld.org/docid/5a69a3304.html>; ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), *ՄԱԿ ՓԳՀ դիտարկումները Փախստականների և ապաստանի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի և Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի նախագծի վերաբերյալ՝ չպատժելիության սկզբունքի հետ կապված*, 12 նոյեմբերի 2019թ., որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.refworld.org/docid/5d895004.html> :

Ոչ պաշտոնական թարգմանություն

ՄԱԿ ՓԳՀ-ն նաև նշում է, որ լայն իմաստով այս հոդվածի կարգավորման առարկան անկանոն մուտքն ու ելքն է, չնայած փախստականների համատեքստում չպատժելիության սկզբունքը վերաբերում է միայն անկանոն մուտքին: Ուստի ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է *քրեական օրենսգրքի նախագծի 443-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանաբար խմբագրել:*

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է փոփոխել *քրեական օրենսգրքի նախագծի 443-րդ հոդվածի 5-րդ մասը* հետևյալ կերպ.
«Սույն հոդվածի գործողությունը չի տարածվում թրաֆիքինգից տուժած անձի վրա, որը համագործակցում է իրավապահ մարմինների հետ, ինչպես նաև ապաստան հայցողների և փախստականների վրա, որոնք մուտք են գործել Հայաստանի Հանրապետություն առանց սահմանված փաստաթղթերի կամ պատշաճ թույլտվության»:

2 Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը

2.2 Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց ծագման երկրներին տեղեկատվություն տրամադրելուն վերաբերող 113-րդ և 282-րդ հոդվածները

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի նախագծի (*քրեական դատավարության օրենսգրքի նախագիծ*) առաջարկվող 113-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է վարույթն իրականացնող մարմնի՝ 24 ժամվա ընթացքում քաղաքացիության կամ մշտական բնակության պետությանը ձերբակալված օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի, նրան անազատության մեջ պահելու հիմքերի և վայրի մասին տեղեկացնելու պարտականությունը:

113-րդ հոդվածի 2-րդ մասը ամրագրում է ձերբակալված անձի քաղաքացիության կամ մշտական բնակության պետության իրավասու ներկայացուցչի՝ այդ անձին հաղորդակցվելու կամ տեսակցելու իրավունքը:

Քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 282-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է նաև դատարանի պարտականությունը դատավճիռը կատարման հանձնելու կարգադրության մասին տեղեկացնելու օտարերկրացու քաղաքացիության պետությանը:

Այս հոդվածները երաշխավորում են օտարերկրացու՝ հյուպատոսական աջակցություն հայցելու իրավունքը և համապատասխան պետական մարմինների՝

այս իրավունքից անարգել օգտվելու հնարավորություն տրամադրելու պարտականությունը՝ հյուպատոսական հարաբերությունների վերաբերյալ միջազգային իրավունքի նորմերին համապատասխան¹⁶: Այս դրույթները, միտված լինելով խնդրո առարկա օտարերկրացիներին լրացուցիչ երաշխիքներ տրամադրելուն, չեն պահանջում այդ անձանց համաձայնությունը նրանց ձերբակալության փաստի և գտնվելու վայրի մասին ծագման կամ մշտական բնակության պետությանը տեղեկացնելու համար:

Այս դրույթները ապաստան հայցողների և փախստականների նկատմամբ կիրառվելու դեպքում կարող են որոշակի մտահոգություններ առաջացնել: Ապաստան հայցողների և փախստականների, ինչպես նաև դեռևս ապաստանի պաշտոնական հայց չներկայացրած և հետապնդման ենթարկվելու երկյուղ արտահայտած անձանց մասին ծագման/մշտական բնակության երկրին տեղեկություններ տրամադրելը կարող է հանգեցնել գաղտնիության սկզբունքի խախտման, որը սահմանված է «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով¹⁷:

Ապաստանի ընթացակարգերում գաղտնիության սկզբունքը բխում է մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավական նորմերից, որոնք երաշխավորում են մասնավոր կյանքի իրավունքը և պաշտպանում անհատներին կամայական կամ ապօրինի միջամտությունից¹⁸: Գաղտնիությունը հատկապես կարևոր է ապաստանի ընթացակարգերում խոցելի իրավիճակի պատճառով, որում հայտնվում են ապաստան հյացողներն ու փախստականները: Նման իրավիճակը անպայմանորեն ենթադրում է հետապնդման երկյուղ՝ հաճախ ծագման երկրի իշխանությունների կողմից, և կարող է ավելի վտանգավոր դառնալ, եթե տեղեկատվության պաշտպանությունը չսպաստվի: Քանի դեռ ապաստանի հայցի վերաբերյալ վերջնական որոշում չի կայացվել, ծագման երկրի իշխանություններին ապաստան հայցողներին առնչվող անձնական տվյալներ կամ ցանկացած այլ տեղեկատվություն տրամադրելը կհակասի Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի ոգուն և նպատակին: Մեկ այլ կարևոր

¹⁶ Հյուպատոսական հարաբերությունների մասին Վիեննայի կոնվենցիա, 24 ապրիլի 1963թ., Միավորված ազգերի կազմակերպություն, Միջազգային պայմանագրերի շարք, հատոր 596, թիվ 8638, էջ 261:

¹⁷ Փախստականների և ապաստանի մասին Հայաստանի Հանրապետության 2008 թվականի թիվ ՀՕ-211-Ն օրենք (2015թ.) [Հայաստան], 27 նոյեմբերի 2008թ., որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.refworld.org/docid/4f1986412.html>:

32-րդ հոդվածի 2-րդ մաս. «Սույն հոդվածի 1-ին մասում թվարկված պետական մարմինների կողմից ապաստանի շնորհումը պետք է դիտվի Հայաստանի Հանրապետության շահերի ներքո, և սույն օրենքի կամ ապաստանի և փախստականների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության այլ օրենսդրական ակտերի կիրառման ընթացքում որևէ պարագայում չպետք է ապաստան հայցողի կամ փախստականի մասին տեղեկություններ փոխանակվեն նրա քաղաքացիության կամ նախկին մշտական բնակության երկրի իշխանությունների հետ»:

¹⁸ 1948 թվականի դեկտեմբերի 10-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 12-րդ հոդված; Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 17-րդ հոդված; Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 16-րդ հոդված; Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդված:

նկատառում են ծագման երկրում ապաստան հայցողի կամ փախստականի ընտանիքի անդամների ավնտանգությանը հնարավոր սպառնալիքները:

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է

- Փոփոխություններ կատարել *քրեական դատավարության օրենսգրքի նախագծի* 113-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում և 282-րդ հոդվածի 4-րդ մասում, որոնցով ուղղակիորեն կսահմանվի, որ անազատության մեջ գտնվող օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը պետք է արդյունավետ կերպով և ժամանակին տեղեկացվի հյուպատոսական աջակցություն հայցելու իրավունքի մասին, և նման աջակցությունը պետք է տրամադրվի նրա խնդրանքի հիման վրա:
- Դիտարկել *քրեական դատավարության օրենսգրքի նախագծի* 113-րդ և 282-րդ հոդվածները հետևյալ բովանդակությամբ դրույթով լրացնելը.
«Որևէ պարագայում ապաստան հայցողի կամ փախստականի մասին որևէ տեղեկություն չի տրամադրվում նրա քաղաքացիության կամ նախկին մշտական բնակության պետության մարմիններին՝ համաձայն «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի»:

2.3 Տարիքը որոշելու վերաբերյալ 107-րդ հոդվածի 4-րդ մասը և 410-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը

Համաձայն *քրեական դատավարության օրենսգրքի նախագծի* 410-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ երեխային վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթով պարզման ենթակա հանգամանքներից է երեխայի տարիքը: *Քրեական դատավարության օրենսգրքի նախագծի* 107-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ տարիքը հաստատող փաստաթղթի բացակայության դեպքում տարիքը հաստատվում է դատաբժշկական և դատահոգեբանական փորձագետների եզրակացությամբ:

Հայաստանում ապաստան հայցող՝ առանց ուղեկցության երեխաների նկատմամբ իրականացվող քրեական հետապնդման պրակտիկան մշտադիտարկելիս ՄԱԿ ՓԳՀ-ն արձանագրել է դեպքեր, երբ մեղադրյալին, որը հայտնում էր, որ ինքը երեխա է, վերաբերվել են որպես չափահասի՝ նախքան տարիքը հաստատվելը: Նման մոտեցումը կարող է հանգեցնել խնդրո առարկա անձի մարդու իրավունքների խախտման և հարցականի տակ դնել կալանքի օրինականությունը, եթե ավելի ուշ տարիքի գնահատումը ցույց տա, որ խնդրո առարկա անձը երեխա է: Ուստի կարևոր է սահմանել ուղղակի երաշխիք, որը կապահովի, որ յուրաքանչյուր անձի, որը հայտնում է, որ ինքը երեխա է, կամ ողջամտորեն ենթադրվում է, որ երեխա է, պետք է վերաբերվել որպես երեխայի,

քանի դեռ հակառակը չի հաստատվել, և որ հակասության կամ անբավարար ապացույցների դեպքում չփարատված կասկածները մեկնաբանվեն հօգուտ անձի¹⁹:

Ավելին, հարկավոր է հիշել, որ տարիքի գնահատման որոշ մեթոդներ կարող են վախեցնել և տրավմայի ենթարկել երեխաներին և կարող են նույնիսկ հավասարազոր լինել անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի²⁰: Ուստի կարևոր է նախատեսել կիրառելի միջազգային չափանիշների վրա հիմնված հատուկ ընթացակարգային երաշխիքներ տարիքի գնահատման անցկացման համար²¹:

¹⁹ ՄԱԿ-ի փախստականների հարցերով զբաղվող հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), *Միջազգային պաշտպանության վերաբերյալ ուղեցույց թիվ 8. Երեխաների ապաստանի հայցերը՝ ըստ Փախստականների մասին 1951 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածի Ա մասի 2-րդ կետի և 2 մասի և/կամ դրա Փախստականների կարգավիճակին առնչվող 1967 թվականի արձանագրության*, 22 դեկտեմբերի 2009թ., HCR/GIP/09/08, 75-76-րդ պարբերություններ, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.refworld.org/docid/4b2f4f6d2.html>; ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտե (ԵԻՀ), *Ընդհանուր մեկնաբանություն թիվ 6 (2005թ.)*. Առանց չափահասի ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների հանդեպ վերաբերմունքը նրանց ծագման երկրից դուրս, 1 սեպտեմբերի 2005թ., CRC/GC/2005/6, 31-րդ պարբերություն, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.refworld.org/docid/42dd174b4.html>; ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտե (ԵԻՀ), *Ընդհանուր մեկնաբանություն թիվ 10 (2007թ.)*. Երեխաների իրավունքները անչափահասների գործերով արդարադատության մեջ, 39-րդ պարբերություն, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <file:///C:/Users/borisevi/Downloads/G0741351.pdf>:

²⁰ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) թիվ 2195 բանաձևը (2017թ.) առանց չափահասի ուղեկցության միգրանտ երեխաների համար երեխայի շահերը հաշվի առնող տարիքի գնահատման վերաբերյալ, 5-րդ պարբերություն, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://bit.ly/2YX85cX>; Մարդու իրավունքների եվրոպական դատարան, *Յյազգյուլ Յիլմազն ընդդեմ Թուրքիայի*, թիվ/36369/06, 1 փետրվարի 2011թ.:

²¹ Լրացուցիչ ուղղորդման համար տես, օրինակ, Եվրոպայի խորհուրդ, *Չափորոշիչներ, ուղղորդում և ընթացիկ պրակտիկաներ. Երեխայի շահերը հաշվի առնող մոտեցումների սատարումը միգրացիայի ոլորտում*, 2019 թվականի դեկտեմբեր, էջ 23-26, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://bit.ly/2tuClijK>: Եվրոպայի խորհուրդ, *Տարիքի գնահատում. Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների քաղաքականությունը, ընթացակարգերը և պրակտիկաները, որտեղ հարգված են երեխաների իրավունքները միգրացիայի համատեքստում*, 2017 թվականի սեպտեմբեր, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.refworld.org/docid/59d203a14.html>; Եվրոպական միություն. Ապաստանի հարցերով աջակցության Եվրոպական գրասենյակ, *Տարիքի գնահատման պրակտիկան Եվրոպայում*, 2013 թվականի դեկտեմբեր, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.refworld.org/docid/532191894.html>; Եվրոպական միություն. Ապաստանի հարցերով աջակցության Եվրոպական գրասենյակ, *Տարիքի գնահատման գործնական ուղեցույց*, 7 մարտի 2018թ., Երկրորդ հրատարակություն, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.refworld.org/docid/5aafb42c0.html>; ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ (ՅՈՒՆԻՄՍԵՖ), *Տարիքի գնահատում. տեխնիկական ծանոթագրություն*, 2013 թվականի հունվար, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.refworld.org/docid/5130659f2.html>; ՄԱԿ-ի փախստականների հարցերով զբաղվող հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), *ՄԱԿ ՓԳՀ դիտարկումները ապաստան հայցող ընտանիքից անջատված կամ առանց չափահասի ուղեկցության երեխաների նույնականացման գործընթացում տարիքի գնահատման վերաբերյալ*, 1 հունիսի 2015թ., որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.refworld.org/docid/55759d2d4.html>; ՄԱԿ-ի փախստականների հարցերով զբաղվող հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), *ՄԱԿ-ի փախստականների հարցերով զբաղվող հանձնակատարի Հյուսիսային Եվրոպայի տարածաշրջանային ներկայացուցչության դիտարկումները «Ապաստանի ընթացակարգում տարիքի գնահատման ավելի վաղ իրականացման» մասին օրենքի նախագծի առաջարկի մասին ("Äldersbedömning tidigare i asylprocessen") Ds 2016:37*, 7 հունիս 2017թ., որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.refworld.org/docid/5937a8e14.html>:

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է

- Լրացնել *քրեական դատավարության օրենսգրքի նախագծի* 107-րդ կամ 410-րդ հոդվածը կամ Գլուխ 32-ը (Փորձաքննությունը) դրույթով, որը կսահմանի, որ յուրաքանչյուր անձի, որը պնդում է, կամ ով ողջամտորեն ենթադրվում է, որ երեխա է, պետք է վերաբերվել որպես երեխայի, քանի դեռ հակառակը չի հաստատվել, իսկ հակասության կամ անբավարար ապացույցների դեպքում չփարատված կասկածները մեկնաբանվում են հոգուտ անձի:
- Լրացնել *քրեական դատավարության օրենսգրքի նախագծի* 107-րդ կամ 410-րդ հոդվածը կամ Գլուխ 32-ը (Փորձաքննությունը) միջազգային չափանիշների և ուղեցույցների վրա հիմնված՝ տարիքի գնահատման անցկացման ընթացակարգային երաշխիքներով:

2.4 Թարգմանչական ծառայությունների վերաբերյալ 61-րդ հոդվածը

ՄԱԿ ՓԳՀ-ն գովելի է համարում *քրեական դատավարության օրենսգրքի նախագծի* 61-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը այն մասին, որ թարգմանիչը պետք է պատշաճ տիրապետի վարույթի լեզվին և այն լեզվին, որից կատարվում է թարգմանությունը: Այդուհանդերձ ապաստանի ընթացակարգերի, ինչպես նաև ապաստան հայցողների նկատմամբ իրականացվող քրեական վարույթների մշտադիտարկման ընթացքում ՄԱԿ ՓԳՀ-ն արձանագրել է Հայաստանում որոշ հազվագյուտ լեզուների պատշաճ իմացությամբ որակյալ թարգմանիչներ գտնելու հետ կապված դժվարություններ: Որոշ դեպքերում ներգրավվել են նույն լեզվաընտանիքին պատկանող լեզվից թարգմանող թարգմանիչներ՝ չնայած տվյալ անձի՝ այդ լեզվի սահմանափակ իմացությանը:

Ուստի հաշվի առնելով որակյալ թարգմանության մեծ կարևորությունը՝ այն գործնականում ապահովելու նպատակով խորհուրդ է տրվում ավելացնել Հայաստանից դուրս գտնվող մասնագետի կողմից հեռակա թարգմանության հնարավորություն նախատեսող դրույթ: Նման հեռակա թարգմանությունը ենթադրում է հաղորդակցության համապատասխան միջոցների գործածում և հաջորդող հայերեն թարգմանության ապահովում այն դեպքում, երբ ընտրված մասնագետը չի տիրապետում վարույթի լեզվին:

Ավելին, 61-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետը սահմանում է թարգմանության ընթացքում ներկա գտնվող անձանց հարցեր տալու թարգմանչի իրավունքը՝ թարգմանությունը ճշգրտելու համար: Թարգմանության ընթացքում իսկապես հաճախ ծագում է ճշգրտումներ անելու անհրաժեշտություն, սակայն հավասարապես կարևոր է այնպես անել, որ թարգմանչի և հարցաքննվող անձի միջև անկախ հաղորդակցությունը հասցվի նվազագույնի և տեղի ունենա միայն

վարույթն իրականացնող մարմնի նախնական համաձայնությամբ: Այս խորհուրդը նաև բխում է ՄԱԿ ՓԳՀ-ի՝ Հայաստանում թարգմանչական ծառայությունների որակի (այդ թվում՝ քրեական վարույթի շրջանակում) մշտադիտարկման փորձից:

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է

- Լրացնել *քրեական դատավարության օրենսգրքի նախագծի* 61-րդ հոդվածը հաղորդակցության հարմար միջոցների օգտագործմամբ հեռակա թարգմանություն և վարույթի լեզվով հաջորդող թարգմանություն նախատեսող դրույթով այն դեպքում, երբ Հայաստանում պատշաճ թարգմանիչ չի գտնվում:
- Փոփոխություններ կատարել *քրեական դատավարության օրենսգրքի նախագծի* 61-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետում, որոնց արդյունքում թարգմանիչը կարող է հարցաքննվող անձին հարցեր տալ միայն ճշգրտում կատարելու անհրաժեշտության մասին վարույթն իրականացնող մարմնին հայտնելուց և նման ճշգրտում անելու մասին համաձայնություն ստանալուց հետո:

Ամփոփում

ՄԱԿ ՓԳՀ-ն ողջունում է մասնակցային մոտեցումը և համապարփակ խորհրդակցային գործընթացը այս օրենսդրական առաջարկությունների մշակման աշխատանքներում, շարունակում է մնալ հասանելի հետագա քննարկումների համար և պատրաստ է հետագայում ևս անհրաժեշտության դեպքում տրամադրելու իր փորձն ու աջակցությունը:

ՄԱԿ ՓԳՀ, 29 հունվարի 2020թ.